



ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 22 ՅՈՒԼԻՍ, 2024

ՏԵՐՈՒՄԱՆ ԱՊՈԹԷ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՈՒՐ ԻՆՃ Իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. Ի չար խորհրդոց, Ի բանից եւ Ի գործոց փրկեալս ԿԻ. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119

ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆ ՔԸ՝ ԻՄ ՅՈՅՍԻ ԵՐԿՍ

Յիշէ խոստումդ, որ ԿՈՒԻՐ ԻՆՃԻ՝ քու ծառայիդ.

այն խոստումը, որուն վրայ դրի յոյսս:

Տառապանքիս մէջ սա է մխիթարանքս,

որ քու խօսքդ կեանք ԿՈՒՄ ԻՆՃԻ:

Հակառակ ամբարտաւան մարդոց բուռն ծաղրանքին,

եւ Օրէնքէդ խոստորեցայ:

Անցեալին ԿՈՒՄՈՒՄ ՎՃԻՌՆԵՐՈՂ միշտ իմ մտքիս մէջ են, ՏԵՐ,

անոնցմով կը քաջալերուիմ:

Զայրոյթով կը լեցուիմ ամբարիշտներուն համար,

որոնք Օրէնքդ լքած են:

Այս պանդուխտ կեանքիս մէջ

կանոններդ են մշտական երգս:

Գիշերուան մէջ անունդ միշտ իմ մտքիս մէջ ունիմ, ՏԵՐ,

եւ Օրէնքիդ մասին կը խորհիմ:

Կեանքի մէջ այս է բաժինս.-

Հրահանգներուդ հնազանդիլ:

ՇԱՐՎԱՆ

Ի քեզ նայիմք յոյսդ անմաստոյց Ի զգայական ծածկեալ լուսոյ.

որ վասն մեր եղար Ի գրի, եւ նընջեցեր Ի ԿՈՒՄԱՆԻ՝

առ մեզ ննջեա՛, արթուն բնութիւն, հերքեա զճարին ներգործութիւն.

զի Ի ԿՈՒՐՆՅԵԱՆ ԵՒ զԻՇԵՐԻ ԿՈՒՄՈՒՄ քեզ փառս անլուծիլ:

Էիդ լուսոյ անըստութիւնի պաղատանօք կամք առաջի.

որ փակեալ դրամքք յերեկոյին՝ երեւեցար մերասանին.

ընդ ԹՈՎՄԱՅԻ առ քեզ գոչեմք՝ ՏԵՐ ԵՒ ԱՍՏՈՒՄՈՒՄ զքեզ դաւանեմք.

էջ եւ առ մեզ յերեկոյիս՝ եւ ԿՈՒՐ զողջոյն քո Ի հոգիս:

Ռամեալքս ըզքեզ, ՏԵՐ, աղաչեմք՝ մեզ յօգնութիւն նայեա՛, հայցեմք,

պահապանդ Իսրայէլի՝ անձանց մերոց լեր հովանի.

օթեա՛ առ մեզ, իսաղաղարար, եւ ննջեսցուք անխռովարար.

զի ընդ առաօտըս կանխեսցուք օրինել զքեզ ընդ ՀՕՐ ՀՈՂՈՒՎ:

ԱՊՈԹԷ

ՏԵՐ, ըրէ այնպէս՝ որ մեր սիրտը քու սիրովդ եւ քաղցրութեամբդ լեցուի, եւ մենք քու բարութեանդ ցոլացումը ըլլանք մեր շրջապատին մէջ: Խեղճն ու փրկարը ուրնակոյի ջրնենք, ցաւին ու փազնապին անտարբեր ջնանք, այլ՝ քու քաղցր ցօղը ըլլանք, եւ անժպիտ մարդոց ժպիտ մը բերենք, անուրախ մարդոց սիրտը ուրախացնենք, յուսահատ մարդոց յաւիտենական կեանքի յոյսը փանք, անսէր մարդոց սէր բաշխենք, սառնացեալ սիրտերը սիրովդ ջերմացնենք, եւ ՔՈՒ ՍՈՒՐԷ անունովդ կնքենք եւ ՔԵՂԻ համար կամարենք ու փաճարացնենք անոնց հոգիները: Ամէն:

ՀԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հօգօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ: (X 3)

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց:

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա՛:

ՀԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցեղոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղեղոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՍԱՂՄՈՍ 64

ԶԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԷՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՂՈԹՔ

Լսէ ձայնս, իմ գանգաբոս, ով Աստուած,
ագաբէ կեանքս թշնամիին սարսափէն:
Պաշտպանէ զիս չար մարդոց սադրանքներէն,
անօրէնութիւն գործող մարդոց ամբոխէն,
որոնք սուրերու պէս կը սրեն իրենց լեզուն,
եւ թունաւոր խօսքերու իրենց նետերը կ'արձակեն,
իրենց թաքստոցներէն հարուածելու համար անմեղը,
անակնկալօրէն հարուածելու համար զայն, առանց վախնալու:
Զար խորհուրդներով իրար կը քաջալերեն,
հաշիւ կ'ընեն՝ թէ ուր դնեն իրենց գաղտուկ թակարդները,
եւ կ'ըսեն՝ «Ոչ ոք կը տեսնէ մեզ»:
Զարիք կը նիւթեն, ըսելով.
«Ինչ կ'ապարեալ դաւ մը լարեցինք»:
Որքան խորհրդաւոր են մարդու միտքն ու սիրտը:
Բայց Աստուած իր նետերով պիտի հարուածէ զանոնք,
եւ յանկարծակի պիտի զարնուին:
Իրենց լեզուն պարճառ պիտի ըլլայ իրենց կործանումին,
եւ բոլոր տեսնողները ցաւով իրենց գլուխը պիտի երերցնեն:
Ամէն մարդիկ վախով պիտի լեցուին.
Աստուծոյ գործը պիտի պարմեն,
հասկնալով անոր ըրածին իմաստը:
Արդարները թող Տիրոջմով ուրախանան եւ անոր ապաւինին,
որով ուղիղ մարդիկը թող օրհներգեն զայն:

Պահապան ամենայնի Քրիստոս,
*աջ էո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ էո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*



ՉԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԷՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔ

Դաւիթ նաեւ իր աղօթքներուն մէջ կը յիշէ իր դժուարութիւնը, իր հալածական վիճակը, կը յիշէ իր թշնամիները, թէ ինչ կը ծրագրեն իր մասին: Այո, որքան ալ Աստուած գիտէ թէ ինչ վիճակի մէջ ենք, կամ ինչ վիճակի մէջէն կ'ացնինք, բայց կ'ուզէ որ կը սպասէ, որ մենք անդրադառնանք, մենք արտայայտենք այդ վիճակը, անով ցոյց տալու, թէ գիտակ են: Այնպէս ինչպէս Քրիստոս, երբ պարագայ մը եկաւ Իրեն, գիտեր այդ պարագան ինչ բանի կարիքը ունի, բայց Ան հարցուց, «Ի՞նչ կ'ուզես որ ընեմ քեզի համար»:

Երկրորդ, այս ձեւով Դաւիթ իր նեղութիւնը եւ դժուարութիւնը Աստուծոյ կը յանձնէ: Որովհետեւ Դաւիթ ի վիճակի չէ այս բոլորը փանելու, ուստի Աստուծոյ կը յանձնէ: Այնպէս ինչպէս մենք, երբ նեղութեան եւ դժուարութեան մէջ ենք, առաջին իսկ առիթով, կը փորձենք մենք գլուխ հանել, մենք լուծել դժուարութիւնը, երբ ի վիճակի չենք ըլլար այլեւս, ահա այն պարէն կը դիմենք Աստուծոյ:

Դաւիթ այս Սաղմոսի ճամբով եւ իր օրինակովը մեզի կը փոխանցէ հետեւեալը:

ա. Աղօթքի պարասխան: Երբ հաւաքքով է որ կը դիմենք Աստուծոյ: Աստուած պարբարաւ է ոչ միայն լսելու, այլ նաեւ պարասխանելու մեր աղօթքներուն: Ահա թէ ինչ կը սորվեցնէ Քրիստոս, խնդրեցէք եւ պիտի փրկուի: Խնդրենք հաւաքքով, առանց կասկածի, առանց յեղին նպատակներու: Որովհետեւ վերջ ի վերջոյ, սրտերը քննողը Աստուած, գիտէ մեր խորհուրդները: Երկրորդ, երբ հաւաքքով կը խնդրենք, նաեւ խնդրենք Իր կամքը, այսինքն՝ հասկնալու Իր կամքը թէ արդեօք ինչ ունինք սորվելիք այս բոլորին մէջ:

բ. Աստուծոյ պաշտպանութիւնը: Երբ կը պարասխանէ, այդ պարասխանը կ'ըլլայ պաշտպանութիւնը: Այո է որ կը խնդրէ Դաւիթ, եւ իր թշնամիները կը ներկայացնէ, ու անոնց օգտագործած մեթօքը, սուր եւ թունաւոր լեզու: Այսինքն՝ նենգաւոր, զրպարտող: Հակառակ անոր, որ Դաւիթ յաղթեց Գողեաթին, բայց դարձեալ Աստուծոյ կը դիմէ օգնութեան: Ինչպիսին ալ ըլլան թշնամիները, Դաւիթ ունի ամբողջական վստահութիւն Աստուծոյ եւ համբերութեամբ կը սպասէ Աստուծոյ ժամանակին, որովհետեւ վստահ գիտէ, որ Աստուած պիտի գայ օգնութեան:

գ. Աստուծոյ ամենագիտութիւնը: Դաւիթի թշնամիները իրենք զիրենք այնպէս կը ներկայացնեն, որ ոչ ոք կը տեսնէ իրենց ըրածը, բայց եկուր տես, որ Աստուած ամենապարտաւոր ամենագետ է: Այսօր ալ այնպէս մը կ'ապրինք մեր կեանքը ընելով այնպիսի բաներ, ուր կարծէք ոչ ոք տեսած ըլլար, բայց Աստուծոյ ամենապարտաւորութիւնը, որմէ ոչ ոք կրնայ վրիպիսի, խուսաբի:

դ. Աստուծոյ ամենախիշխանութիւնը: Որքան ալ Դաւիթի թշնամիները վստահ ենք իրենց ծրագրով, թէ կարացեալ դաւ լարեցին, բայց Աստուած պիտի հարուածէ զանոնք: Այսօր ալ նոյնն է պարագան, ուր մարդիկ այնքան վստահ են իրենց ծրագրերով, բայց Աստուած պիտի հարուածէ, բացի եթէ երբեք Աստուծոյ ծրագրին մէջ անոնք կրնան օգտագործուիլ:

ե. Աստուծոյ արդարութիւնը: Ահա Դաւիթ կը ներկայացնէ, որ Աստուած ինչ որ ալ պիտի ընէ, արդարութեամբ է որ պիտի ընէ: «Իրենց լեզուն պարճաւ պիտի ըլլայ իրենց կործանումին»: Ինչո՞ւ, որովհետեւ իրենց լեզուն թունաւոր խօսքերով լեցուն: Նոյն արտայայտութիւնը Քրիստոս պիտի ըսէ. «Ձեզ պիտի դատեն ձեր խօսքերուն համար»: Հեղաքրքրականօրէն, նաեւ այսպէս կը ներկայացնէ, որ Աստուծոյ հարուածը կու գայ յանկարծակի, անակնկալօրէն, չսպասուած մէկ պահուն:

զ. Աստուծոյ փրկութիւնը: Դաւիթ կը ներկայացնէ, որ մարդիկ պիտի տեսնէ եւ հասկնան Աստուծոյ ըրածին մասին եւ վախով պիտի լեցուին եւ պիտի պարմեն այդ ըրածները: Սա կը նշանակէ, որ պիտի գայ պահը փրկութեան: Այնպէս չէ որ անօրէնութիւնը վերջ չունի, վերջ պիտի ունենայ, եւ այդ բոլորը անակնկալօրէն տեղի պիտի ունենայ, եւ մարդիկ վախով պիտի լեցուին: Որովհետեւ այդ մասին մտածող չկայ: Յաճախ ունինք այն փրամադրութիւնը, որ աշխարհը այսպէս եկեր է ու այսպէս ալ կ'երթայ: Բայց այդպէս չէ, պիտի վերջ ունենայ, եւ այդ վերջը շարքերու համար, այսինքն՝ անոնց որոնք պարբարաւ չեն այդ պահուան համար անակնկալ պիտի ըլլայ ու պիտի զարմանան, որովհետեւ պիտի գայ ժամանակը, որ Աստուած Իր փրկած խոստումին համաձայն պիտի ազատագրէ Իր ժողովուրդը:

է. Ուրախութիւն եւ խաղաղութիւն: Ահա այն պարէն է որ արդարները, Աստուծով արդարացածները, պիտի ուրախանան եւ ցնծան, ուստի Դաւիթ կոչ կ'ուղղէ որ Աստուծոյ ապաւինին, իսկ սրտով ուղիղները թող օրհներգեն զԱստուած: Ահա այս է մարգարէական փոփոխութիւնը այս Սաղմոսին մէջ, որ արդէն գալիքը կը ներկայացնէ, պարկերացնէ արդէն կարարուած: Այս յոյսով եւ փրամադրութեամբ է որ կը սպասէ ու պիտի սպասէ իւրաքննաչիւր հաւաքացեալ: Այո, որքան ալ ծանր են վիճակներն ու կացութիւնները, որուն մէջէն կ'անցնինք, բայց ունինք ու պէտք է ունենանք այդ հաւաքքն ու վստահութիւնը, որ Տէրը ամէն ինչ իր աւարտին պիտի հասցնէ, միայն թէ համբերութեամբ սպասենք այդ օրուն: